Регион и мир, 2019, № 6

Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորումը ՀՀ-ում

Աղաջանյան Մ.Ա.
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետ
(Հայաստան, Երևան)
martin1998yan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ փոքր և միջին ձեռնարկատիրություն, պետական կարգավորում, շուկայական հարաբերություններ, շրջանառություն

Государственное регулирование малых и средних предприятий в Республике Армения

Агаджанян М. А.
Факультет международных отношений Ереванского государственного университета
(Армения, Ереван)
martin1998yan@gmail.com

Резюме: Целью данной работы является представление важности малых и средних предприятий, которые являются краеугольными камнями рыночно-здоровых отношений, в основном сделав упор на государственное регулирование МСП в Республике Армения. Здесь были представлены основные критерии классификации МСП, основные направления развития МСП в Республике Армения. Была предпринята попытка ответить на вопрос «Что такое государственное регулирование МСП?», а также были сделаны предложения по дальнейшему развитию МСП в Республике Армения.
Ключевые слова: малые и средние предприятия, государственное регулирование, рыночные отношения, оборот

State regulation of the small and medium-sized enterprises in the Republic of Armenia

Aghajanyan M.A.
Faculty of International Relations of Yerevan State University (Armenia, Yerevan)
martin1998yan@gmail.com

Abstract: Within the aim of this work is the representation of the importance of small and medium-sized enterprises, which are the cornerstones of the market-healthy relations, mainly focusing on the state regulation of SMEs in the Republic of Armenia. Here were presented the main criteria for SMEs classification, main directions of developments of SMEs in the Republic of Armenia. An attempt has been made to answer the question “What is the state regulation of SMEs?”, as well as has been done proposals concerning the further development of SMEs in the Republic of Armenia.
Keywords: Small and medium-sized enterprises, state regulation, market relations, turnover

Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) լիարժեք զբաղվածության ապահովման, տնտեսական աճի, աղքատության հաղթահարման, նորարարությունների հիմք են. դրանք նպաստում են ձեռնարկատիրչական կարողությունների զարգացմանը, խթանում են նախաձեռնողականությունը և ռիսկը: Այս տիպի կազմակերպությունների արդյունավետ գործունեության նախապայմաններից է համարվում երկրում ազատ, մրցակցային շուկայական տնտեսության տիպի առկայությունը, որտեղ պետության զարգացման հեռանկարները խարսխված են հովանավորչության կարիք չունեցող ուժեղ արտադրողի վրա: Այս դասին պատկանող կազմակերպությունները նախահիմք են երկրում այնպիսի շուկայի ձևավորմանը, որը բնութագրվում է իր ճկունությամբ, հաճախորդակենտրոնությամբ, հնարավորությունների իրացման արագությամբ: ՓՄՁ-ն ցանկացած երկրի հաջողության գրավականն է: Տվյալ աշխատանքի դիտակետում են հայաստանյան ՓՄՁ-ների պետական կարգավորումը, մասնավորապես հարցադրումներ է բարձրացվելու առ այն՝ ի՞նչ սկզբունքներով է իրականացվում ՓՄՁ պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում և որո՞նք են ՓՄՁ-ի զարգացման հեռանկարները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արդիականացման գործընթացները, տնտեսվարման ազատ շուկայական համակարգի անցնցում անցման ապահովումը,

քաղաքացիների շրջանակում ձեռնարկատիրական կարողությունների զարգացումը և դրանք կիրառելու համար հավասար հնարավորությունների ստեղծումը պետության առջև առաջ են քաշում իր տեսակի մեջ նախատիպը չունեցող մարտահրավերներ տնտեսության ոլորտում. հանգեցնում են պետության նոր դերի սահմանմանը ստեղծված սոցիալ-տնտեսական իրադրությունում, պահանջում պետական կարգավորման միջոցառումների կատարելագործում ձեռնարկատիրական գործունեությունում:

Ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար «պետական կարգավորում» կամ առհասարակ «կարգավորում» հասկացության վերաբերյալ անհրաժեշտ է նախևառաջ տալ դրա բացատրությունը: Oxford Advanced Learner's Dictionary-ն տալիս է այս հասկացության հետևյալ բացատրությունը՝ «կառավարության կամ այլ իշխանական մարմնի կողմից կայացված պաշտոնական որոշում»:[1] Մասնագիտական տեսանկյունից այս հասկացությունը սահմանվում է որպես «այն հիմնական միջոցների ամբողջություն, որոնց օգնությամբ Կառավարությունն իրականացնում է իր ծրագրային նպատակները. դրանք դրսևորվում են յուրահատուկ ստանդարտների և հրահանգների ձևով, որոնք ուղենշում են խաղի ընդհանուր կանոնները, որոնց շրջանակներում անհատները և կազմակերպությունները իրականացնում են իրենց գործունեությունը:[2] Վերը նշվածը հաշվի առնելով կարելի է սահմանել, որ **ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումը պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող օրենսդրական, գործադիր-կարգադրիչ և վերահսկողական միջոցառումների համակարգ է՝ ուղղված տնտեսական համակարգի բնականոն զարգացմանը՝** ի պատասխան ժամանակակից մարտահրավերների:

Ձեռնարկատիրական գործունեության բնագավառում պետական կարգավորման հիմնական խնդիրներից է բարենպաստ ձեռնարկատիրական միջավայրի ձևավորումը: Ձեռնարկատիրական միջավայրը տնտեսական զարգացման կոնկրետ տիպին ներհատուկ սոցիալ-քաղաքական, իրավական, տընտեսական, ինստիտուցիոնալ և սոցիալ-հոգեբանական գործոնների կուռ համակարգ է, որոնք կարող են նպաստել, խանգարել կամ էլ չեզոք դիրք գրավել ձեռնարկատիրական գործընթացի զարգացման նկատմամբ:[3]

Այս համատեքստում ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման խնդիրներից է դառնում այնպիսի միջավայրի ձևավորումը, որի շրջանակներում ձեռնարկատերերի և պետության շահերը առավելագույնս կհամադրվեն միմյանց հետ: Ուստի, այս ուղղության զարգացման առաջին փուլը ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող ընթացիկ օրենսդրության կատարելագործումն է:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 05.12.2000թ. ընդունել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (այսուհետև՝ Օրենք), որը փոփոխությունների ենթարկվեց 05.10.2010թ. և 22.12.2010թ.: Որակապես ամենակարևոր նորամուծություններից էր սկզբունքորեն նոր չափորոշիչները՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող փոքր սուբյեկտներին տարորոշելու համար, առաջին անգամ հստակեցվել են գերփոքր, փոքր և միջին բիզնես հասկացությունները:[4]

Ձեռնարկատիրության տեսակը	**Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը**	**Շրջանառություն**	**Ակտիվների հաշվեկշռային արժեք**
գերփոքր	մինչև 10 մարդ	մինչև 100 մլն դրամ	մինչև 100 մլն դրամ
փոքր	մինչև 50 մարդ	մինչև 500 մլն դրամ	մինչև 500 մլն դրամ
միջին	մինչև 250 մարդ	մինչև 1500 մլն դրամ	մինչև 1000 մլն դրամ

[1] Աղբյուր՝ https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/regulation_1?q=regulation.

[2] Susan E. Dudley and Jerry Brito, opening paragraphs of chapter 1, "What is Regulation?" in Regulation: A Primer (second edition), Fairfax, VA: Mercatus Center At George Mason University, August 14, 2012.

[3] Краснова, О.М. Развитие инновационных процессов в РТ, Экономический вестник РТ, 2007, № 4, С. 19–24.

[4] Աղբյուր՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=64599:

2010 թվականի հոկտեմբերի 5-ի Օրենքում կատարված փոփոխություններով հստակեցվեցին ՓՄՁ սուբյեկտների դասակարգման հիմք հանդիսացող աշխատողների միջին ցուցակային թվաքանակը արտահայտող չափորոշիչները, ինչպես նաև միջազգային ստանդարտներին համապատասխանելու պահանջից ելնելով՝ ավելացվեց դասակարգման մեկ այլ չափանիշ ևս, այն է՝ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը (շրջանառությունը) կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը: Այսպիսով, օրենքի փոփոխությամբ դասակարգումը հետայսու իրականացնելիս հարկ է առաջնորդվել վերոնշյալ չափանիշների զուգորդմամբ: Հիմնվելով ՀՀ Ֆինանսների նախարարության տվյալների բազայի վրա՝ ՀՀ-ում 2014թ. գործունեություն է ծավալել 74365 ՓՄՁ սուբյեկտ, որոնց մոտավորապես 91,6%-ը կամ 68117-ը կազմել են գերփոքր սուբյեկտները, 6,9%-ը կամ 5109-ը՝ փոքր, իսկ 1,5%-ը կամ 1139-ը՝ միջին:[5]



Գծագիր 1. Տնտեսավարման սուբյեկտները, որոնց նկատմամբ տվյալ Օրենքը չի կիրառվում:

Օրենքի հաջորդ փոփոխությունը կատարվեց 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, որով լրացվեց այն սուբյեկտների և կազմակերպությունների ցանկը, որոնց նկատմամբ տվյալ օրենսդրական ակտի գործունեությունը չի տարածվում: Մասնավորապես, ավելացվեցին «ներդրումային ֆոնդեր» և «ներդրումային ֆոնդի կառավարիչներ» հասկացությունները:[6] Արդյունքում, հարց է առաջանում՝ ինչպիսի՞ քայլեր է ձեռնարկում պետությունը փոքր բիզնեսի զարգացման համար: Օրենքի հոդված 4-ով ամրագրվում է ՓՄՁ-ի պետական աջակցության իրականացման տարեկան ծրագիրը, որը հաստատվում է ՀՀ-ի Կառավարության կողմից: Ծրագիրը իրականացվում է ՓՄՁ-ի պետական աջակցության հիմնական ուղղությունների շրջանակում՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայությունից: ՀՀ-ում ՓՄՁ-ի պետական աջակցության հիմնական ուղղություններնից են՝

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը,
- ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,
- աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանը ու զարգացմանը նպաստելը,
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,
- արտաքին տնտեսական գործունեության խթանումը,
- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը,
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,
- կադրերի պատրաստումը և վերապատրաստումը:[7]

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության իրավասության շրջանակում է ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ռազմավարության և պետական աջակցության տարեկան ծրագրերի մշակումը, իսկ դրանց իրականացման գործառույթները, իրենց հերթին, վերապահված են «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ)՝ հիմնադրված ՀՀ Կառավարության կողմից 2002թ.:

ՀՀ Կառավարությունը 2015թ. հաստատել էր «Փոքր և միջին ձեռնարկատիրության զար-

[5] Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝ http://www.minfin.am

[6] Աղբյուր՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=64599:

[7] Աղբյուր՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=64599:

գացման 2016-2018թթ. ռազմավարությունը», որի հիմնական նպատակն էր ՀՀ տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ներուժի լիարժեք օգտագործումը և նրա դերի բարձրացումը: Տվյալ ռազմավարության մշակման ընթացքում օգտագործվել էր «Փոքր բիզնես ակտի» (ՓԲԱ) գնահատման 10 ուղղությունները: Օրինակ, «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին» 2017 թվականի ծրագրի իրականացման շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ շուրջ 4700 սուբյեկտի տրամադրվել է 11487 աջակցություն հետևյալ տարածքային համամասնությամբ՝ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 3,3%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96,7%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Տնտեսական գործունեության պետական կարգավորումը իր ուղղակի և անուղղակի ազդեցություն է թողնում քաղաքացիների բարեկեցության մակարդակի վրա: Չնայած պետական կարգավորումը շատ դեպքերում տալիս է հասարակական կարևոր օգուտներ, այն, այնուամենայնիվ, շատ հաճախ կիրառվում է առանց խորքային վերլուծության՝ առանց ստացվող օգուտների և պատճառվող վնասների հաշվարկման:[8]

Պետական կարգավորման քաղաքականության ուսումնասիրությունը վեր հանեց հայաստանյան ձեռնարկատիրությանը բնորոշ մի շարք համընդհանուր հիմնախնդիրներ, որոնց շրջանակներում հարկ է ընդգծել հետևյալները՝

- ՓՄՁ-ին առնչվող օրենսդրական դաշտի անկատարելիությունը, մասնավորապես՝ բյուրոկրատական խոչընդոտները, ՓՄՁ-ների համար գործող իրավական դաշտի թերությունները,
- միտվածությունը առևտրագնումային գործունեության ուղղությամբ՝ բավարար չափով չկենտրոնանալով արտադրական գործունեության վրա,
- փոքր բիզնեսի զարգացման անբավարար մակարդակը և վարկային համակարգի ոչ արդյունավետ մեխանիզմները,
- շուկայի ձախողումները հաղթահարող քաղաքականության բացակայությունը:

Ներկայումս պատրաստ են մի շարք օրինագծեր, որոնք դեռևս պետք է որոշակի փուլերով անցնեն մինչ իրենց վերջնական ամրագրումն ստանալը: Առավել հետաքրքրություն և կարևորություն են առաջացնում այն օրինագծերը, որոնք վերաբերում են հարկման հարցերին՝ պահանջելով համապատասխան համաձայնեցում, որը բավականին դժվարհասանելի և խնդրահարույց է. Այդպիսի համաձայնեցումը ընթանում է բավականին երկար և մեծ դժվարություններով՝ օրինակ, հարկման ընդհանուր համակարգի անցմանը առնչվող շեմային մեծությունների սահմանման հետ կապված հարցերը:

Փոքր բիզնեսի զարգացումը լրջագույն սոցիալ-տնտեսական մարտահրավեր է, որին պետք է դարձվի մեծ ուշադրություն պետության կողմից: «ՓՄՁ պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը կարևոր քայլ էր այդ ուղղությամբ:

ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության աջակցությունը և պետական կարգավորումը գտնվում են սաղմնային փուլում և պահանջում են որակապես նոր մոտեցումներ: Հրատապ խնդիր է համարվում ձեռնարկատիրական գործունեության շարունակական զարգացման ապահովումը, ինչը, իր հերթին, տրամաբանորեն հանգեցնում է տվյալ ոլորտում պետական քաղաքականության վերանայման: Ձեռնարկատիրական գործունեության գծով պետական կարգավորման առաքելությունը պետք է հանգի վարչական կարգավորման աստիճանի զգալի նվազեցմանը, ֆինանսական և ժամանակային ծախսերի կրճատմանը, որոնք կրել են ձեռնարկությունները թույտվության, արտոնագրի, կառավարող մարմինների կողմից այլ վճարովի ծառայությունների ձեռքբերման համար:

ՀՀ-ում հասարակության բարեկեցության ապահովումը, աղքատության հաղթահարումը, աշխատատեղերի ստեղծումը, պետության գրավիչ կերպարի ձևավորումը այս ոլորտի միջոցով հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա պետական կարգավորման համակարգը

[8] Committee for Economic Development, Modernizing Government Regulation: The Need for Action, 1998, p. vii (https://www.ced.org/reports/single/modernizing-government-regulation-the-need-for-action).

համապատասխան իրավական վիրահատության կենթարկվի: Մասնավորապես, այս ոլորտին առնչվող պետական քաղաքականությունը մշակելիս անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ բաղադրամասերի վրա՝

- ձեռնարկատիրական գործունեության ոլորտը կարգավորող նոր նորմերի ներդրման,
- պետական կարգավորման կոնկրետ կառուցակարգերի ներդրման՝ հիմնված հնարավոր ծախքերի վերլուծության վրա,
- օրինաստեղծ գործունեության հրապարակայնության նկատմամբ հասարակական պահանջմունքների:[9]

ՓՄՁ բոլոր խնդիրների համար գոյություն չունի մեկ համընդհանուր լուծում. որոշ դեպքում հաջողության հասնելու գրավականը ՓՄՁ զարգացման ապակենտրոնացված քաղաքականությունների իրականացումն է, իսկ որոշ դեպքերում էլ կենտրոնացված մոտեցումների կիրառումը: Հայաստանի Հանրապետության այս ոլորտում արդյունավետ գործունեության իրականացման նախապայմաններից պետք է լինի տարբերակված մոտեցում ցուցաբերելը տարբեր ուղղվածություն ունեցող ՓՄՁ-ներին, օրինակ, զանազանել ձեռնարկատիրական միտվածությամբ ՓՄՁ-ներին և գոյատևման միտում ունեցող ՓՄՁ-ներին, բարձր տեխնոլոգիաների և նորարարությամբ կողմնորոշված ՓՄՁ-ներին և «թաքնված չեմպիոններին», արդյունաբերական ուղղվածությամբ ՓՄՁ-ներին և առևտրային կողմնորոշում ունեցող բիզնեսներին: Եզրակացությունը մեկն է. իրենց գործունեության բնույթի առանձնահատկություններով պայմանավորված յուրաքանչյուր ՓՄՁ սուբյեկտ պահանջում է այս ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունների միջոցով տարբեր գործիքակազմերի կիրառում, որպեսզի հաղթահարեն իրենց ներհատուկ խոչընդոտները:

ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը ապահովելու համար նաև առաջարկում ենք մեր օրենսդրությունում կիրառվող վերև նշված ՓՄՁ-ի դասակարգմանը հաղորդել առավել գործնական նշանակություն. չնայած Օրենքում գոյություն ունի տվյալ դասակարգումը՝ ՀՀ Հարկային օրենսգրքով այն անտեսվում է՝ ձեռք բերելով դեկլարատիվ բնույթ: Մասնավորապես, Հարկային օրենսգիրքը նույնիսկ հեռավոր տարանջատում չի մտցնում հարկման ենթակա իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների դասակարգային պատկանելիության հարցում (այսինքն, տվյալ կազմակերպությունը կամ անհատ ձեռներեցը պատկանում է գերփոքր, փոքր թե միջին խմբին)՝ կիրառելով հարկային համընդհանուր ռեժիմ՝ սահմանելով թե՛ գերփոքր, թե՛ փոքր, թե՛ միջին բիզնեսի հարկման համար միևնույն պահանջները:

Մյուս առաջարկությունը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորմանը առնչվող որոշումների ընդունման ժամանակ մասնագիտական ասոցիացիաների, անկախ փորձագիտական և հետազոտական խմբերի ներգրավմանը, որոնց շահերը կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն պայմանավորված լինել ընդունվելիք որոշմամբ: Ներգրավման գործընթացները կարող են իրականանալ հանրային քննարկումների, բանավեճերի, տվյալ խմբերի ներկայացուցիչների կողմից առաջարկությունների, դիմումների, բողոքների ներկայացման միջոցով: Այս համատեքստում բավականին կարևոր է այն հանգամանքը, որ հանրային քննարկումների, բանավեճերի ժամանակ չներկայացվի այնպիսի օրենսդրական նախագիծ, որը Ազգային ժողով ներկայացնելու ժամանակ կենթարկվի էական բովանդակային փոփոխությունների: Արդյունքում, կստեղծվի մի իրավիճակ, երբ հանրային քննարկման առարկա հանդիսացող և հանրության որոշակի հատվածի շահերը շոշափող նախագծի էական դրույթները հանրության կներկայացվեն այլ բովանդակությամբ մինչև նախագծի պաշտոնական ընդունելը, իսկ Ազգային ժողովում կներկայացվի և կընդունվի լրիվ այլ պարունակությամբ:

Այսպիսով, ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումը պետք է միտված լինի պետության վերահսկող գործառույթների նվազեցմանը՝ միաժամանակ ամրապնդելով պետության դերը ձեռնարկատիրական բարենպաստ միջավայրի ձևավորման

[9] Прудников, В.М. Государственное регулирование предпринимательской деятельности: учебное пособие / Прудников В.М.. – М.: ПРИОР, 2006. – 250 с., стр. 123.

հարցում: Ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման նպատակը լայն առումով կարելի է սահմանել որպես այս ոլորտի կառավարման ֆորմալ կանոնների պարզեցում և ձեռնարկատիրական գործունեության արտաքին միջավայրի բարելավում, իսկ նեղ առումով այն հանգում է հետևյալին՝ **խոշոր բիզնեսը պետք է կարգավորվի, իսկ փոքր և միջին բիզնեսը՝ աջակցվի**:

Ամփոփելով կարելի է նշել՝ ՓՄՁ-ն շուկայական հարաբերությունների համակարգում գրավում է իր առանձնահատուկ տեղը, որի համար բնութագրական է շարժունությունը, ճկունությունը, հարմարվողականությունը և բարձր արդյունավետությունը: Փոքր ձեռնարկությունների հիմնումը տնտեսության ցանկացած հատվածում հնարավոր է և հիմնավորված, եթե առկա է տվյալ ոլորտում հասարակության պահանջմունքների բավարարման թերի մակարդակ: Այնուամենայինիվ, ՓՄՁ-ի պետական կարգավորման վերաբերյալ կարծիքները տարբերվում են՝ մասնավորապես, քննարկման առարկա է դառնում այն հարցը, թե ինչպիսի կարգավորումներն են նպաստում կամ խոչընդոտում ՓՄՁ-ի զարգացմանը և ինչ ժամանակային կտրվածքով է դրանք ձեռնտու կիրառել: Անշուշտ, պետական կարգավորումների հետևանքով որոշ ՓՄՁ-ներ բարգավաճում են, իսկ որոշներն էլ ընդհակառակը կրում են դժվարություններ, սակայն հաստատապես մի բան ևս պարզ է՝ **պետական կարգավորումներին հետևելը միտված է ապահովելու առողջ, անվտանգ, հավասար և մրցունակ բիզնես միջավայր,** որի ուղին էլ բռնել է Հայաստանի Հանրապետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Susan E. Dudley and Jerry Brito, opening paragraphs of chapter 1, “What is Regulation?” in Regulation: A Primer (second edition), Fairfax, VA: Mercatus Center At George Mason University, August 14, 2012
2. Краснова, О.М. Развитие инновационных процессов в РТ, Экономический вестник РТ, 2007, № 4, С. 19–24
3. Committee for Economic Development, Modernizing Government Regulation: The Need for Action, 1998, p. vii (https://www.ced.org/ reports/ single/modernizing-government-regulation-the-need-for-action)
4. Прудников, В.М. Государственное регулирование предпринимательской деятельности: учебное пособие / Прудников В.М.. – М.: ПРИОР, 2006. – 250 с., стр. 123.
5. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ https://www.arlis.am/
6. ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝ http://www.minfin.am
7. https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/regulation_1?q=regulation
8. Հայաստանի ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական կայք՝ https://www.smednc.am/